37. ՄԵԿ ԲԵՐԻՍ՝ ՏԱՍ ԿԸ ԿՈՐՑՈՒՍ

Ժամանակով մարդ մը կէղնի, ըդրան իրեք տղա, ինքն ու իրեք տղեն դող կէղնին, համալ գող, օր աստված էլ-բեթարեն աղատե։ Օր մը օր բան մը չը թռցում բերին՝ էդ գիշեր ըռհաթ չըն քնի։ Կնիկ կըսե.

— Մա՛րդ, հերք է, ձեռ քաշեք էդ սովորութքեն, մեկ բերիս՝ տաս կը կորցուս։

Մարդ կը բշտե, կը ծեծե զկնիկ ու էլման հըտ տղեկներուն գողութեն կէնե։

Կնիկ իմալ կըսե-մեկ բերիս՝ տաս կը կորցուս, համալ կէղնի,— մեծ տղեն գողութենի վախտ կը բռնվի, գուզե փախնի, տան մը բանձր փանջարից կը թռնա, գընկնա վըր քալին, տեղն ու տեղ կը մեռնի, միջնեկ՝ ջելման գետն ջընցնելու ժամանակ կը թուլնա, կը խեղդվի, պզտիկ տղին կը բռնին վըր գողութենին՝ էն խըդար կը ծեծին, օր կը մեռնի։

Մարդ կըսե.

— Վո՛լա ես իմ ձեռքով իմ զավկըներուն սպանի, մկա ի՞նչ էնիմ։

Կնիկ կըսե.

— Հող տուր վըր գլխուդ, ես քըղի չըսե՞նք՝ մեկ բերիս՝ տաս կը կորցուս։

Մարդ օր զուր իրեք տղեկներ կը կորցու, մնա կունդո պես մինակ, նո՛ր դիմնա ուր կնկա ըսած, զըդրան կը թորկե կէրթա դեն մեռ

Կէրթա, կէրթա, ռաստ գիկա մարդու մե, օր հոգին ի բուռ՝ կը փախնի։

Մարդ կը կտրե զառեջ, կը հարցու.

— Յորի՞ն հմալ կը փախնիս մըջ արնին կորուկ, քու ծոցն յորի՞ն ուռուկ է, բա՞ն իս գողցի։

Մարդ կըսե.

— Վոլա քըզնե պահիմ, ասուց ի՞նչ պահիմ, գացեր ենք քաղաք գողութենի, կողպեղ կոտրի մտա տուն մե՝ բաներ-մաներ վերցի, էնե դուս գիկենք, տանտերեր ներս մտան, զիսի բռնին՝ զարկին ու զարկին, անջախ ուրանց ձեռքեն փստացի փախա։

— Է՞,— կըսե յառեջվա գող,— չըս լսե՞րի—մեկ բերիս՝ տաս կը կորցուս։

— Վո՛լա գլուխսի չը մտավ։

— Լսե՛, հում կաթնակեր, ես ու իմ տղեկներ գող ենք, հմալ գող, օր աստված էլ-բեթարեն ազատե։ Իրեք տղեկներսի կորան՝ մեծն յընկավ վըր քալին, մեռավ, միջնեկ՝ գետն յընցնելու ժամանակ խեղդվավ, պզտիկ տղեն բռնին վըր գողութենին, էն խըդար ծեծին, օր մեռավ։ Մկա ես՝ իմալ կունդոն վըր ավերակին. դուզի՞ս իմ պես էղնիս։

— Չէ՛, ո՞ն ուր աչք քոռ գուզե։

— Օր հմալ է,— կըսե յառեջվա գող,— թափե զգողցուկներ, յընկնանք դեղե-գեղ, քաղքե-քաղաք, էրկրոց-էրկիր, ըսինք մեծ ու պզտկին՝ մարգ թըզ գողութեն չենե՞, չըմքի մեկ բերիս՝ տաս կը կորցուս։